

Հայ ժողովրդի պատմության Ժամանակագրություն

հունվար 6 ՍՈՒՐԲ ԾՆՈՒՄ

հունվար 8
Արանց: Հայոց տոմարի վեցերորդ ամիսն է, (հունվարի 8-ից մինչև փետրվարի 6-ը): Վանական Վարդապետը այս անունը գրում է Արանց, որովհետև սա այն ամիսն է, երբ ձյունապատ լեռներով ու բլուրներով միայն արանք (տղամարդիկ) կարող են ճանապարհ գնալ:

հունվար 19
Անահիտ- Պտղաբերության, ծննդաբերության, վաղ շրջանում նաև ռազմի աստվածուհին հայ դիցարանում: Արամազդի դուստրը: Անահիտը համապատասխանում է պարսկական Անահիտային, հունական Արտեմիսին, հռոմեական Դիանային: Մ.թ.ա. I դարում Անահիտը հայկական պետության գլխավոր աստվածուհին էր: Հետագայում, քրիստոնեության հաստատումից հետո, Անահիտի պաշտամունքը վերածվում է Մարիամ Աստվածածնի պաշտամունքի: Անահիտի անունով էր կոչվում հայկական հեթանոսական տոմարի ամիսների 19-րդ օրը:

փետրվար 7
Մեհեկան (Մեհեկի), Հայոց հին տոմարի յոթերորդ ամիսն է (փետրվարի 7-ից մինչև մարտի 8-ը): Վանական Վարդապետն այդ անսանունը կապում է տարվա այն ժամանակի հետ, երբ տուններն ու բույսերը գտնվում են դեռևս մեռյալ, ձյունաթաղ վիճակում:

մարտ 8
Կանանց, մայրության և գեղեցկության օրը:

մարտ 9
Արեգ, հայոց հին տոմարի 8-րդ ամիսն է, (մարտի 9-ից մինչև ապրիլի 7-ը): Ամսանունն առաջացել է արեգակ բառից: Այդ ամսին արեգակի գոլորտյամբ արթնանում է բնությունը: Խոր անցյալում, երբ հայերն իրենց տարեգույլը՝ Նոր տարին սկսում էին բնության զարթոնքին զարնան առաջին ամսին, Արեգը եղել է հայոց տոմարի առաջին ամիսը:

ապրիլ 8
Սեփեկանը հայոց հին տոմարի իններորդ ամիսն (ապրիլի 8-ից մինչև մայիսի 7-ը): Ամսանունը առնչվում է կրակ, հուր բառերի հետ: Այդ ստուգաբանությունը կապվում է զարնան զարթոնքի հետ:

մայիս 5 Սամուլի օր

մայիս 8
Մարերին հայոց տոմարի տասներորդ ամիսն է (մայիսի 8-ից մինչև հունիսի 6-ի): Ըստ Վանական Վարդապետի, դա այն ժամանակն է, երբ մայրիք (ծառերը) կանաչում են ու տերևակալում:

հունիս 7
Մարգացը հայոց հին տոմարի տասներկերորդ ամիսն է, հունիսի 7-ից հուլիսի 6-ը: Անունը կապում են մարգ բառի, այսինքն խոտիմնի, խոտհարքի հետ:

հուլիս 5
Հայաստանի Սահմանադրության օրը:

հուլիս 7
Հրոտիցը հայոց տոմարի տասներկուերորդ ամիսն է, սկսվել է հուլիսի 7-ին և վերջացել օգոստոսի 5-ին: Անունն առաջացել է հուր բառից, որովհետև ամիսը համընկնում է տարվա ամենաշոգ ժամանակին:

օգոստոս 7
Ավելյացը (օգոստոսի 6-ից մինչև օգոստոսի 10-ը) հայոց հին տոմարի տասներեքերորդ (լրացուցիչ) ամիսն է, ունեցել է 5 օր՝ հասարակ տարիներին և 6 օր՝ նահանջ տարիներին: Ավելյացը նշանակում է ավելացած՝ տարվա 12 ամիսներից ավելացած օրերը:

օգոստոս 11
Նավասարդը հայոց հին տոմարի առաջին ամիսն է, կազմված է նավ (նոր) և սարդ (տարի) բառերից: Նավասարդ (օգոստոսի 11-ից մինչև սեպտեմբերի 9-ը): Հին հայերի համար այս ամսվա 1-ը (օգոստոս 11-ը) եղել է ժողովրդական խրախմբանքների տոն:

սեպտեմբեր 1 Գիտության օր

սեպտեմբեր 10
Հռոչն հայոց հին տոմարի երկրորդ ամիսն է (սեպտեմբերի 10-ից մինչև հոկտեմբերի 9-ը): Այս ամսանունը, ըստ պատմագիր ու տոմարագետ Վանական Վարդապետի (1181-1251) առնչվում է հոր բառի հետ: Դա հավանաբար կապվում է տարվա այն ժամանակի հետ, երբ մարդիկ իրենց հավաքած բերքը, ամբարում էին հորերում: Ըստ ակադեմիկոս Ստ. Մալխասյանի, Հռոչը նշանակում է ուռի ամիս, այսինքն որթատունկի այգեստանի ամիս:

հոկտեմբեր 11
Սահինը հին հայոց տոմարի երրորդ ամիսն է, (հոկտեմբերի 10-ից մինչև նոյեմբերի 8-ը): Ըստ Վանական Վարդապետի, Սահին անունը առնչվում է սահմանել բայի հետ, որովհետև իբր այդ ամսում էր սահմանվում ձմռան նախապատրաստական աշխատանքների կատարումը: Ըստ ակադեմիկոս Ստ. Մալխասյանի, Սահինը նշանակում է սերմանց ամիս:

նոյեմբեր 9
Տրեն հայոց հին տոմարի չորրորդ ամիսն է, (նոյեմբերի 9-ից մինչև դեկտեմբերի 8-ը): Այս ամսանվան ծագումը կապում են հայոց դպրության աստված Տիրի անվան հետ:

դեկտեմբեր 9
Քաղոցը հայոց հին տոմարի հինգերորդ ամիսն է, (դեկտեմբերի 9-ից մինչև հունվարի 7-ը): Այս անունը կապում են քաղել բայի հետ: Հր. Աճառյանը գտնում է, որ Քաղոցը կազմված է «անասնոց խառքն» բառերից (քաղ նշանակում է նոխազ, արու այծ) և կապված է անասունների զուգավորման ամսի հետ:

239 ապրիլ 29
Ծնվեց հայ եկեղեցական-քաղաքական գործիչ Գրիգոր Լուսավորիչը: (Վախճ. 326թ.-ին):

303 հունվար 6
Տրդատ 3-րդ թագավորի մկրտությունը: Նա եղավ հայոց առաջին քրիստոնյա թագավորը:

325 մայիս 19
Նիկիա քաղաքում հրավիրվեց առաջին տիեզերական ժողովը, որտեղ ընդունվեց «Նիկիական հանգանակը»:

330 մայիս 11
Կոստանդինոս Ա Մեծ կայսրն իր մայրաքաղաքը Հռոմից տեղափոխեց Բյուզանդիոն, որը նրա պատվին վերանվանվեց Կոստանդնուպոլիս:

362 փետրվար 17
Ծնվեց հայկական գրի ստեղծող, հայ գրչության, հայագիր դպրոցի հիմնադիր և հայերենի առաջին ուսուցիչ Մեսրոպ Մաշտոցը:

(Շարունակելի)

Լուրեր

Իրանահայ համայնք

- Կրոնական փոքրամասնությունները արտոնված են պայմանագրային ձևով վարձվել ուսումնադաստիարակչության նախարարությունում

Ուսումնադաստիարակչության նախարարության մոտ վարձվելու համապատասխան արտոնությունը տրվել է շուրջ երկու տարի առաջ, որը, սակայն չի իրագործվել:

Այդ իսկ պատճառով Իսլամական խորհրդարանում կրոնական փոքրամասնությունների պատգամաւորները հիշեցնան կարգով խորհրդարանին ուղղած նամակով հետապնդել են հարցը հարուցելով կառավարության հաստատած արտոնությունը չիրագործելու խնդիրը: Թւականիս հոկտեմբերի 26-ին խորհրդարանի դիվանը սույն հիշեցում-նամակը հղել է ուսումնադաստիարակչության նախարարին: Նշելի է, որ օրերս կրօնական փոքրամասնությունների պատգամավորները հանդիպում են ունեցել հանրապետության նախագահի խորհրդարանական եւ իրավական հարցերով օգնական հոջ. Աբթահիի հետ, որի ընթացքում խոսվել է նաեւ այդ թեմայի մասին: Սույն խնդրի վերաբերյալ հոջ. Աբթահին հոկտեմբերի 29-ին նամակ է հղել ներքին գործոց նախարար Մուսավի Լարիին: Մաե ուսումնադաստիարակչության նախարար Գաջիին եւ ծրագրամշակման ու տնօրինման կազմակերպության տնօրեն եւ նախագահի օգնական դոկտ. Սաթթարիֆարին, որի մեջ պահանջել է վերահաստիւթուն հիշյալ խնդրի նկատմամբ: Ուսումնադաստիարակչության նախարարությունը կրօնական փոքրամասնություններին պայմանագրային կարգով վարձելու առընչութամբ հայտարարություն է հրատարակել: Այդ հայտարարութամ մեջ նշված էր նաեւ, որ ցանկացողները թվականիս նոյեմբերի 22-ից մինչեւ դեկտեմբերի 1-ը կարող են դիմել ուսումնադաստիարակչութամ գերատեսչություններ առավել տեղեկություններ եւ հարցատետր ստանալու համար: Վարձվելու դիմումը առընչվում է Թեիրան քաղաքին, նաեւ Սպահան, Խուզեստան, Ֆարս, Բերման, Արեւելյան եւ Արեւմտյան Ատրպատական, Կեստրոնական եւ Յազդ նահանգներին:

Իրան

- **ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆ ԶԱՅ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՈւՇԱԴՐՈւՅՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈւՄ**

Յուրաքանչյուր երկրի համար ամենահարմար առեւտրային գործընկերները հարեւաններն են: Ճակատագրի բերումով Զայաստանի հարեւան երկրներից երկուսը թշնամաբար են տրամադրված մեր նկատմամբ, երրորդը դեռեւս չի հաղթահարել ներքին անկայունությունը, եւ միայն Իրանի պարագայում համագործակցութամ խորացման համար չկան լուրջ խոչընդոտներ:

Իրանցի իրենց գործընկերների հետ գործարար կապերի զարգացման օգտին են հանդես գալիս հայ գործարարները, մասնավորապես Զայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միութունը (ՀԱԳԱ):

Ինչպես տեղեկացանք միութամ տնօրեն Գագիկ Մակարյանից, ՀԱԳԱի նախագահ Արսեն Դազարյանն ու ինքը մոտ 1 միս առաջ հանդիպել են Զայաստանում Իրանի դեսպան Սոհամնադ Ֆարիադ Քոլեյնիի հետ: Զանդիպման ժամանակ Զայաստանի գործարարները ցանկութուն են հայտնել, որ համագործակցութամ խորացման մասին խոսակցությունները մտնեն գործնական փուլ: Մասնավորապես խոսքը Զայաստանի եւ Իրանի Արեւելյան Ատրպատական նահանգի գործարար կապերի աշխուժացմանն է վերաբերում: Նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել Զայաստանից Արեւելյան Ատրպատական գործարարների խումբ ուղարկելու մասին: Զենց այս նահանգը Թավրիզ կենտրոնով ունի մոտ 5 հազար գործարաններ, ցուցահանդեսային համալիրներ: Իրանական կողմը խոստացել է հայկական ընկերություններին 25և30 տոկոս զեղչով տարածքներ տրամադրել ինչպես համերկրային ընդգրկման, այնպես է միջազգային ցուցահանդեսներին մասնակցելու համար:

Ինչ վերաբերում է տնտեսութամ տարբեր ոլորտներին, ապա, Գագիկ Մակարյանի հավաստմամբ, կոնկրետ պայմանավորվածությունների հավանականություն կա մեքենաշինութամ, հաստոցաշինութամ բնագավառում: Մասնավորապես Իրանում «ՊԷԺ» հայտնի ընկերութամ ներակայացուցչությունը բանակցություններ է վարում հայկական մի ընկերութամ հետ այստեղ արտադրություն հիմնելու նպատակով: Նախատեսվում է նաեւ թեթեւ արդյունաբերութամ, հանքարդյունաբերութամ,

Էներգետիկայի, շինարարութամ ոլորտների ընկերությունների հանդիպումներ եւ քննարկումներ:

ՀԱԳԱ տնօրենը հայտնեց, որ տարեկան Իրանից Զայաստան մուտք է գործել 26 հազար բեռնատար ավտոմեքենա: Այսինքն տրանսպորտային համագործակցութամ առումով եւս Իրանը մեզ համար հետաքրքրություն է ներկայացնում:

Ջուլֆայի ազատ տնտեսական գոտին նույնպես կարող է հետաքրքրական լինել: Իրանցիները հպարտութամբ են նշում հայ գործարար Զրանտ Վարդանյանի հետ հաջողված համագործակցությունը, որն այցելելով Իրան, տեղում ծանոթացավ երկրի հնարավորություններին եւ երկու գործարան հիմնադրեց:

Մի խոսքով, ՀԱԳԱ-ն առաջիկա ամիսներին մի քանի նախնական այցելություններ է կազմակերպելու Իրան եւ մասնավորապես Արեւելյան Ատրպատական, ձեւավորելու է համակարգող աշխատանքային խումբ, որն էլ կնախապատրաստի գործարարների խմբի հիմնական այցելությունը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

- **Թեիրանը ոչ մի բանակցություն չի վարում Վաշինգտոնի հետ, հայտարարել է Իրանի նախագահը**

ԹԵՀՐԱՆ, 13 ՆՈՅԵՄԲԵՐԻ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իրանի նախագահ Սոհամադ Խաթամին հերքել է այն հաղորդումները, թե իր երկրի եւ ԱՄՆ-ի միջեւ բանակցություններ են ընթանում: «Նախկինում մենք բանակցություններ վարել ենք ժնեւում, բայց դրանք ընդհատվեցին ամերիկացիների մեղքով, եւ այդ ժամանակվանից ի վեր ոչ մի երկխոսություն չի եղել», - հայտարարել է նա: Դրա հետ մեկտեղ նախագահը նշել է, որ «Թեիրան այցելող առանձին անձինք պատրաստակամություն են հայտնում մեզնից ուղերձներ փոխանցել ամերիկացիներին, սակայն մենք դրան պատասխանում ենք, որ ԱՄՆ-ը պետք է փոխի իր վերաբերմունքն Իրանի նկատմամբ»:

«Իրանի նկատմամբ մոտեցման փոփոխումը օգտակար կլինի հենց ամերիկացիների համար», - նշել է Խաթամին: Նրա կարծիքով, «ԱՄՆ-ը ձգտում է իրեն ենթարկել մյուս երկրներին...ամերիկյան ժողովուրդն ստիպված կլինի հսկայական գին վճարել իր կառավարութամ կատարած խոչոր քաղաքական սխալների համար»:

Հայաստան

- **Ռուսաստանի եւ Իրանի հայկական դպրոցների համար իրատարակվում են դասագրքեր**

ԵՐԵՎԱՆ, 18 ՆՈՅԵՄԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ : ՀՀ կրթութամ եւ գիտութամ նախարարութամ պատվերով, Ռուսաստանի Դաշնութամ հայկական դպրոցների համար պատրաստվել է ռուսերեն լեզվով Զայոց պատմութամ ուսումնական ձեռնարկ: Ինչպես տեղեկացրին ԿԳ նախարարութամ սփյուռքի բաժնում, գիրքը լույս կտեսնի առաջիկա ամսում 5 հազար տպաքանակով: Գրքի իրատարակման համար նախարարությունը հատկացրել է 7.5- 8 մլն դրամ: Ամանորին ձեռնարկը նախատեսվում է բաժանել դպրոցներին՝ ըստ ներկայացրած հայտերի: ՌԴ-ում գործում է 23 հայկական դպրոց, որոնցից 19 հանրակրթական, մնացածը կիրակնօրյա: Դպրոցներում սովորում է շուրջ 6. 400 աշակերտ, դասավանդում՝ 300 ուսուցիչ:

Իրանի Թեմական խորհրդի պատվերով, հայկական դպրոցների 1-10-րդ դասարանների համար ՀՀ ԿԳ նախարարութամ «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնը պատրաստում է մայրենի լեզվի դասագրքեր: Ըստ մասնագետների, այն կազմվում է հաշվի առնելով լեզվի տեղային, ուղղագրական առանձնահատկությունը: Դասագրքերը լույս կտեսնեն 2004 թ.-ի հունիսին Իրանում:

Իրանում գործում է 23 ամենօրյա հայկական դպրոց, ուր դասավանդում է 76 ուսուցիչ եւ սովորում ավելի քան 9 հազար աշակերտ:

• Տեղեկատվական միջոցների Հայաստան-Սփյուռք առաջին համաժողովի Հռչակագիր

Հայաստան, Ծաղկաձոր, 16 նոյեմբերի 2003թ.

Ծաղկաձորում կայացած տեղեկատվության միջոցների Հայաստան-Սփյուռք առաջին համաժողովը, հաշվի առնելով բոլոր գեկուցումները, ելույթները և քննարկումները, ընդգծում է, որ այն նոր գործընթացների սկիզբ հանդիսացող կարևոր իրադարձություն է, որը լայն հեռանկարներ կբացի Հայաստան-Սփյուռք կապերի զարգացման, ամրապնդման և համագործակցության խորացման համար: Համաժողովը արձանագրում է, որ արդի աշխարհաքաղաքական պայմաններում տեղեկատվության միջոցների դերն ու նշանակությունը ծեռք է բերում առանձնակի կարևորություն, հատկապես համազգային խնդիրների շուրջ մեր ժողովրդի բոլոր հատվածների համախմբվածության, միասնականության, համերաշխության ոգու հաստատման առումով:

Համաժողովը, ընդգծելով նման միջոցառումների կարևորությունը, որոշում է Հայաստանի և Սփյուռքի մամուլի ներկայացուցիչների հանդիպումները դարձնել ավանդական և հրավիրել ամեն տարի:

Հաշվի առնելով հետագա համագործակցությունը և մշտական կապ ունենալու անհրաժեշտությունը, համաժողովը նախաձեռնում է ստեղծել աշխատանքային խումբ: Խմբի աշխատանքները կազմակերպելու և համակարգելու համար ստեղծվում է Հայաստան-Սփյուռք կապի մասնագիտական աշխատանքային խումբ: Համաժողովը կոչ է անում Հայաստանի, Արցախի և Սփյուռքի հայկական տեղեկատվության միջոցներին սերտորեն համագործակցել և բոլոր հնարավորություններն օգտագործել մեր առջև ծառայած խնդիրների լուծմանը նպաստելուն ի շահ մեր ժողովրդի ապահով և անվտանգ զարգացման ու բարգավաճման:

Համաժողովը որոշեց ստեղծել աշխատանքային սպասարկող խումբ, որի պարտականություններն են

- Հայկական լրատվամիջոցների մասին էլեկտրոնային հասցեների շտեմարանի ձևավորում և մշտական թարմացում
- Հետազոտել և կազմել լրատվամիջոցների մասին հավաքական տեղեկատվություն
- Համահայկական մամուլ ակումբի ստեղծման, գործունեության բնույթի, կառուցվածքի և նպատակների վերաբերյալ առաջարկների մշակում և ստեղծված անընդհատ թարմացվող ցանցով տարածում, կարծիքների հավաքում և նոր առաջարկների արժեւորում
- Աշխատանքային խումբը առաջարկում է դրություններ՝ հայկական ԶԼՍ-ի միջև արդյունավետ տեղեկատվության փոխանակման և այլ հնարավոր համագործակցության ձևերի վերաբերյալ
- Նախապատրաստել առաջարկներ՝ հայկական համակարգչային միասնական կոդի ստեղծման մասին: Հայաստան-Սփյուռք լրատվության միջոցների առաջին համաժողովի բացմանը նոյեմբերի 15-ին ընթերցվեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի ուղղերձը: Ամենայն հայոց կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ-ի օրհնությունը փոխանցեց և մասնակիցներին ողջունեց Մայր Աթոռ սբ. Էջմիածնի տեղեկատվական համակարգի տնօրեն Տ. Վահրամ քհն. Մելիքյանը:

Ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ ԱԳ նախարարության Սփյուռքի հետ կապերի գործակալության պետ Ջիվան Մովսիսյանը, եվրոպայի Հայկական Միությունների Ֆորումի գլխավոր քարտուղար Թորոս Սակերյանը:

Համաժողովին ելույթ ունեցավ ՀՀ հանրային հեռուստառադիոյի խորհրդի նախագահ Ալեքսան Հարությունյանը՝ «Համահայկական տեղեկատվական դաշտի ստեղծման անհրաժեշտությունը, վիճակը և զարգացման ուղղությունները» թեմայով: Ձեկուցումներով հանդես եկան նաև «Նոյան տապալ» ԼՎԿ-ի Սլովակիայի մասնաճյուղի ղեկավար Աշոտ Գրիգորյանը, Հայաստանի գրողների միության քարտուղար Հովիկ Հովեյանը: Ձեկուցումներ

վերաբերյալ մասնակիցների միջև կատարվեց մտքերի փոխանակում:

Հայոց Սփյուռք

• Ստամբուլում պայթյուններից զգալիորեն տուժել են նաև հայկական կազմակերպություններն ու գործարարները

ՄԱՍԱՐՈՒԼ, 20 ՆՈՅԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆԴՐԵՍ: Ստամբուլում այսօր գրեթե միաժամանակ հնչած պայթյուններից զգալիորեն տուժել են նաև հայկական կազմակերպություններն ու գործարարները: Պատմական Փեթա թաղամասում, որը հայտնի է որպես գործարար կենտրոն, իրականացված պայթյունների հետևանքով զգալի վնաս են կրել այդտեղ տեղակայված հայկական սբ. Երրորդություն եկեղեցին, «ժամանակ» և «Մարմարա» օրաթերթերի խմբագրություններն ու տպարանները: Լուրջ նյութական կորուստներ են կրել այդ թաղամասում գործող հայ գործարարները, խանութայինները: Ինչպես տեղեկացանք «ժամանակ» օրաթերթի խմբագիր Արա Գոչունյանից, Երեւանի ժամանակով 16:00-ի դրությամբ պայթյուններից զոհվածների ու տասնյակ վիրավորների թվում հայեր չեն արձանագրվել: Պատրիարքարանն անընդհատ կապի մեջ է պատկան արքյունների հետ՝ համակարգելով ու ամփոփելով հայ համայնքին վերաբերող տվյալները:

• Սփյուռքում գործում է շուրջ 390 հայկական հանրակրթական դպրոց

ԵՐԵՎԱՆ, 20 ՆՈՅԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆԴՐԵՍ : Սփյուռքում ներկայումս գործում է հանրակրթական շուրջ 390 եւ հարյուրից ավելի կիրակնօրյա դպրոց: ՀՀ ԿԳ նախարարության սփյուռքի բաժնի պետ Հրաչ Թադևոյանի խոսքերով, Սփյուռքում հայկական դպրոցների փակման մասին տեղեկությունները միանշանակ չեն, քանի որ փակվելուն զուգահեռ բացվում են նորերը: Մասնավորապես ՌԴ-ում վերջին տարիներին Հայաստանից ներգաղթի հետևանքով ավելացել են կիրակնօրյա դպրոցները: Ինչ վերաբերում է Սփյուռքի ամենօրյա դպրոցներին, ապա դրանք գնալով նվազում են կապված ձեւափոխման որոշ խնդիրների հետ: Հայկական դպրոցները կամ փակվում են, կամ հրաժարում են կրթության, սակայն վերջինները են սպառում են իրենց. բուհ ընունելության քննություններն ընթանում են տվյալ երկրի պետական լեզվով, ինչը անիմաստ է դարձնում ամբողջովին հայերեն ստացած միջնակարգ կրթությունը:

Դպրոցները շատ հաճախ փակվում են նաև ուսուցիչների բացակայության պատճառով, ինչն էլ բացատրվում է ցածր աշխատավարձով: Բաժնի պետի խոսքերով, ներկայումս այդ պատճառով վտանգված է Իրանի տղաների վարժարանների գոյությունը, քանի որ տղանարողիկ չեն համաձայնում ցածր աշխատավարձով աշխատել այդտեղ: Սփյուռքի կրթության ներքին հիմնախնդիրներից մեկն էլ ուսուցչական որոշ կադրերի որակի անբավարարությունն է:

Խնդրի լուծման համար, ՀՀ կառավարությունը պետպատվերի շրջանակներում կազմակերպում է սփյուռքահայ դիմորդների նպատակային ընդունելություն մասնավարձական, հայագիտական եւ արվեստի մասնագիտություններով: Հ.Թադևոյանի խոսքերով, դա հնարավորություն կտա առաջիկա տասնամյակում աստիճանաբար լիովին հոգալ Սփյուռքի համար անհրաժեշտ կադրերի պատրաստման գործը: Նույն խնդիրը լուծվում է նաև ուսուցիչների վերապատրաստման ծրագրերի իրականացման միջոցով: Ամեն տարի վերապատրաստման դասընթացներ են անցկացվում ինչպես Հայաստանում, այնպես էլ մեծաթիվ հայկական դպրոցներ ունեցող երկրներում դասախոսների գործուղման միջոցով: 2004թ.-ին նախատեսվում է կազմակերպել վերապատրաստման մեկամյա դասընթացներ նաև Վրաստանում գործող 156 հայկական դպրոցների ուսուցիչների համար: Դասընթացները կանցկացվեն Թբիլիսի եւ Ախալքալակ քաղաքներում, ուր կգործուղվեն 10-15 դասախոսներ:

Հայոց լեզվին եւ ազգային մշակույթին հաղորդակցվելու հնարավորություն են տալիս նաև Սփյուռքում գործող հարյուրավոր կիրակնօրյա

դպրոցները: Իր հերթին Հայաստանն ամեն տարի դասագրքեր է առաքում Սփյուռքի դպրոցներին, ինչպես նաև աշխատանքներ տանում այնտեղ հրատարակվող դասագրքերի բարելավման եւ տվյալ երկրի պայմաններին համապատասխանեցրած նոր ձեռնարկներ կազմելու ուղղությամբ:

ԶԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ ՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(8 եւ վերջ)

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵՑ ՈՒ ԻՐԱԳՈՐԾՎԵՑ ԶԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ ՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐԴԱՐ ՎՐԵԺԻ ՍՐԲԱԶԱՆ ԺԱՍԸ ՀԱՍԵԼ ԷՐ...

Միայն մի քայլի վրա էր գտնվում «Իսլամի Արծիվը», հայ ժողովրդի ռիսերին թշնամին, մեծ մարդասպանը, որի հրամանով հարյուր հազարավոր հայ մանուկներ ու կանայք տանջամահ եղան Ուրֆայից մինչև Տեր-Չոր...

Արտաշեսը բարձրահասակ, թիկնեղ, կայնաճակատ, խոհուն, լուրջ դեմքով, բայց անչափ համակրելի ու առիճքնուղ երիտասարդ էր: Դեռ 13 տարին չլրացած նա դիմել էր պանդխտության՝ Դոնեցի ածխահանքային մարզը, որտեղ աշխատել էր որպես հացագործ բանվոր եւ այնտեղ էլ, պրոլետարական միջավայրում ստացել էր դաստիարակությունը:

Եթե կամավորական շարժման նա չէր մասնակցել, ասելով, որ Ցարի տված գեները բանվորների արյունով է ներկված՝ ես չեմ բռնի, այս երբ հրապարակվեց խորհրդային իշխանության ոսկետառ դեկրետը Թուրքահայաստանի ինքնորոշման մասին, նա ողջունելով այն՝ ոգևորությամբ բացականչել էր.

- Մեծ Լենինը մեծն Ալեքսանդրի նման մի հարվածով լուծեց անլուծելի համարվող հայկական հարցը...

Եվ Դոնբասի նորաստեղծ Ռեկոմից ստանալով գեներ ու զինամթերք, նա մի խումբ ընկերների հետ անմիջապես մեկնեց Հայաստան, Կարին, եւ որպես շարքային զինվոր մասնակցեց կռիվներին, նա մասնակցեց նաև Դարաքիլիսայի հայտնի հերոսամարտին, կռվի դաշտում ցուցաբերելով անկրկնելի քաջություն ու խիզախություն, որով արժանացել էր զնդապետ Սամարցյանի շնորհակալության ու պարգևատրման...

Ապա, երբ այն ժամանակվա հայ ղեկավարները կապիտուլացիայի ենթարկեցին, Արտաշեսը միանալով ժողովրդական հերոս Անդրանիկին, նրա դրոշի տակ մասնակցեց այն բոլոր դյուցազնական մարտերին, որ մղվեցին 1918 թվի ճակատագրական օրերին ընդդեմ Անդրկովկաս ներխուժած, հայի արյան ծարավի թուրք փաշաների գերագանգ ուժերի դեմ...

Պետրոսը, միջահասակ, միշտ ուրախ ու զվարթ դեմքով, կատակասեր, միշտ չարածճի երիտասարդ էր. նա նույնպես դեռ 13 տարեկան երեխա, դիմել էր պանդխտության, Խարկով քաղաքը, որտեղ փեռում բանվորություն էր արել: 1916 թվին, երբ Ռուսական բանակը գրավեց խոտորջուրը նա մի քանի ընկերներով մեկնել էր խոտորջուր, իր հայրենի կիսավեր ու թափուր գյուղը՝ Վերին-Մոխրակույտը վերաշինելու: Նա հավատացած էր, որ փյունիկ թռչունի նման իր հայրենի Մոխրակույտը մոխիրներից կվերածնի ու նորից կապրի, նոր, վերածնված կյանքով:

Սակայն շուտով թուրքական փաշաները օգտվելով անդրկովկասյան հակահեղափոխական կուսակցությունների հայամերժ դավաճանական գործունեությունից քաղաք քաղաքի ետեւից գրավում էին Հայաստանը... Սիս այդ առաջխաղացման սկզբին, դեռ Բայբուրդը չգրաված, Թուրքերը օղակել էին խոտորջուրը...

Խոտորջուրիցները՝ մոտ 100 կռվողներ Պետրոսի եւ մի քանի ընկերների ղեկավարությամբ կարողանում են կազմակերպել ինքնապաշտպանության գործը, հետ են մղում թուրքական կանոնավոր զորքերի հրետանու եւ հազարավոր խուժանի բազմաթիվ հարձակումները եւ միայն այն ժամանակ, երբ վերջանում են իրենց բոլոր տեսակի պաշարները, երբ Թուրքերը արդեն գրավել էին

Դարսը եւ դրսի օգնությամբ հույսերը մարել էին, միայն այն ժամանակ թողնում են խոտորջուրը: Պետրոսը այդ հերոսական ինքնապաշտպանության ղեկավարի դերում իրեն ցույց է տալիս ոչ միայն որպես քաջամարտիկ կռվող, այլև կարող ռազմական հրամանատար եւ կազմակերպիչ...

Ողջ մնացած խոտորջուրիցները (մոտ 25 հոգի միայն) թողնելով հայրենի գյուղը՝ կռվելով ճանփա են բաց անում դեպի Լազիստան, այնտեղից Կովկաս անցնելու համար... Այդ ողիսական ճանապարհորդության ժամանակ տիֆլից հիվանդացավ, անզգա դրության մեջ վերջ ի վերջո նրանք ընկնում են թուրք իշխանությունների ձեռքը, շխթայակապ տարվում են Տրապիզոնի բանտը, դատապարտվում կախաղանի, որը մի ինչ որ բարենպաստ հանգամանքով եւ Սամուշ գաղտնի օգնությամբ փոփոխվում է 101 տարվա բանտարկության...

Եվ միայն Թուրքիայի պարտությունից հետո, դաշնակիցների պահանջով՝ Տրապիզոնի բանտից ազատվում են ու մեկնում Բաթում, որտեղ եւ Պետրոսը հանդիպում է Արտաշեսին...

Բաթումից նրանք մեկնում են Հայաստան, զինվորագրվում եւ ազնվաբար, անմռունչ տանում են այն ժամանակվա շարքային հայ զինվորների դառնությանը ու զրկանքներով լի չարքաշ ու անփառունակ կյանքը, հավատացած լինելով, որ իրենք օգուտ են բերում իրենց բազմաչարչար ժողովրդին, ծառայում են հայ ժողովրդի դարավոր իղծերի իրագործման, Թուրքահայաստանի ազատագրման վե՛սն գործին:

Եվ ահա այժմ, այդ երկու հայրենասեր ու քաջակորով երիտասարդները մահասարսուռ, հատով գեները ձեռքներին, վերածնված հայ ժողովրդի այդ գիտակից ու վրեժխնդիր զավակները գործում են արյունակցակ թուրք փաշայի վրա, որը մարդկային կերպարանք առած հոշոտել է իրենց ժողովուրդը, որը ուզեցել է, որ աշխարհում ոչ մի հայ չմնա...

Այդ պահին,- պատմում էր Արտաշեսը- երբ արդեն այնքան մոտեցել էինք Ձեռնալին ու հաստատ էր, որ նրա համար այլևս ոչ մի փրկություն չկա, այդ վեհ վայրկյանին՝ այն գիտակցությունը, որ մեզ գերագույն բարատ է վիճակվել ի կատար ածել մեր միլիոնավոր նահատակների վերջին կամքը, նրանց կտակը՝ պատժելու, վրիժառու լինել ջանալներից, էությունս համակվեց մի անպատժելի, անհուճորեն հաճելի երանությանը... Աչքերս վառվեցին մի եզակի, երկնային ջերմությանը... Ու քույրս, Ուրֆայի մոտերը գազանաբար հոշոտված դեռ 16 տարին չլրացած մեր ջքնաղ Աննիկը, աչքերիս առաջ է կանգնում այդ պահին, ձեռքերը ծոցին, գլուխը խոճարի... Իմ նահատակված քույրը...

Նրանք հետ են նայում... Մեկը ձեռքը տանում է գրպանը... Ուրեմն գեներ ունի... Գուցե Ձեռնալի ընկերները գեծ մնային պատժից, եթե գեր չլրտին...

-Փաշա~, փաշա~... Հիշիր Ուրֆան եւ Տեր-Չորը...- գոչում են:

Եվ առանց նշանառության, մեկական պահունակ փամփուշտ կրակում ենք նրանց վրա: Անմիջապես ընկնում են, երկուսը մեր առաջին, արրողը մի քիչ այն կողմ: Պարզ է, նրանց մահը վայրկեանական է... բայց նորից ենք կրակում արդեն ահ ու սարսափ տարածելու եւ մեր հեռանալը ավելի ապահով դերձնելու նպատակով... Ես մի աբոյմա (պահունակ) կրակում եմ դեպի երմուղկյան վերելքը, Չեկայի կողմը, որ այնտեղից դեպի վայրը փութալու սիրահարներ չլինեն... Պետրոսի հետ կրակում ենք եւս մեկական պահունակ դեպի Սուլուլակ ու փողոցի հատակին, ստացվում է մի այնպիսի մեծ, ուժեղ որոտ, կարծես մի ամբողջ վաշտ լինի կրակողը... Տների պատուհանները, որոնք ամառվա սաստիկ շոգի պատճառով բոլորովին բաց էին, անմիջապես, մի ակնթարթում չլրկնոցվ հապճեպ կակվում են: Ես նորից լցնում եմ ատրճանակս, ու մտնում ժուկովսկի, եւ ինչ տեսնեմ, Պետրոսին գրկում է մի հրդեհաշեղ, իսկ երկուհրդեհաշեղ մայթին պառկած... պատին են կպել... Պետրոսի արձանակեր, ուրեմն բռնվել է... Այլապես, ոտով կարող էր նրան մոտենալ եւ գրկելու փորձ անել...

-Ընկեր, թող, այս քաղաքական տեռոր է, գործ չունենա... Բայց հրդեհաշեղ համառում է, բաց չի թողնում Պետրոսին իր հուժկու բազուկներից:

Ուզեցի ուղղակի կրակել հիմար ու համառ հրդեհաշեջի վրա, սակայն կարող էր գնդակը կաշել Պետրոսին-շարունակում է Արտաշեսը- ուստի անցա կողքից եմ մի գնդակով սպանեցի հրդեհաշեջին ու Պետրոսի հետ արագ-արագ անցանք դեպի Վոզնեսենսկի... Իսկ պատին սեղմ կլած երկու հրդեհաշեջները բարվի համարեցին կենդանության նշաններ ցույց չտալ եւ անշուշտ օգուտով եղան:

Առանց պատահարի անցանք Պարսկական հյուսիսարևմտյանի առաջից ու հասանք Պալմյանի փուռը, մեր ժամադրավայրը, այնտեղ մի քիչ հանգստանալուց հետո, արդեն անզեն իջանք Երեւանյան հրապարակ, խառնվեցինք զբոսնող հոծ, բազմահազար ժողովրդին, որտեղ ամենքը տարբեր-տարբեր ձեւով պատմում էին կատարվածի մասին, մեր հասցեին հիացմունքի ու շնորհակալության շոյիչ խոսքեր ասում, իսկ մենք, իբրեւ անգիտակ, բեխաբար պատահարից, կրկին ու կրկին հարցնում էինք ու միշտ էլ նորանոր անձնություններ լսում...

Քիչ անց, այդտեղ, "երեւանյան" հրապարակում մեզ գտավ Ծաղիկյան Ստեփանը եւ առաջարկեց գնալ ընթրիքի, քեֆի, «Ամիրանի»: Եւ ասավ, որ այնտեղ կլինեն մի քանի կարեւոր ազգային գործիչներ... Եվ տվավ մի քանիսի անունը... Ես կտրականապես հրաժարվեցի այդ մարդկանց հետ հանդիպելու, մասնավոր քեֆ անել... Սակայն Պետրոսը գնաց...

Ես վերադարձա տուն, որտեղ իմ վախկոտ հայրը, զգուշության բարոզներ խոսեց ինձ: Մեր ընտանիքից դեռ ոչ ոք ոչինչ չգիտեր Ջենայի սպանության կազմակերպման մասին, բայց մայրս մի քիչ կռախել էր, որ իմ մատն էլ մեջն է: Եւ այդ եզրակացության էր եկել երբ ես իմ գլխարկի փոխարեն հայրիկիս գլխարկն էի դրել...

Մայրիկից ջուր խնդրեցի ոտքերս լվանալու համար: Մայրս երբ ջուրը դրեց իմ առաջ, ասաց.

- Մե՛ն գիտնայի վոտվ սպանից, ոտվի՛ն լվանայի ջուրն ինձի...

Այսպես էր պատմում Արտաշեսը սպանությունից հետո պատահածի մասին: Գիշերը Արտաշեսը այնուամենայնիվ զգուշության համար տանը չի քնում, իջնու է փուռը, ֆարտուկ կապում, սկսում է խմոր գնդել...

Նույն գիշերը Չեկայից Վանյա Գեւորգովը ձեռքակալվում է Գեւորգ Գեւորգյանին, որոնց տանը հյուր էր նա գալիս, նա նաեւ փուռ է մտնում, նայում շուրջը, տեսնում է Արտաշեսին ձեռքերը խմորի մեջ աշխատելիս, ու հեռանում է:

Գեւորգին հավանորեն ձեռքակալել էին, որպես Թիֆլիսում նշանավոր անձնավորություն, հարուստ մարդ (ըստ իրենց պրոֆիլակտիկ ցուցակի...)

Արտաշեսն ու Պետրոսը զոհվել են 1937 թվին: Արտաշեսը 1957 թվին բոլորովին արդարացվեց խորհրդային դատարանի կողմից:

(Շար. 8 եւ վերջ)

Աշխարհում ինչի՞ համար են սիրում հայերին

Ս. ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ, Գ. ՎԱՐՆԱՅԱՆ

91. Իմ կարծիքով, Գրիգոր Նարեկացու՝ անհայտությունից կրկին մեզ վերադարձած "Մատյանը", որոշ իմաստով, դարի երկ է: Եթե հայ ընթերցողները ծանոթ էին նրան շատ ավելի վաղուց, ապա ռուսներն քարոզամտությամբ այն ձեռք է բերվել իր երկրորդ կյանքը:

Այդ գիրքը հուզեց ինձ եւ ստիպեց մտածել շատ բաների մասին: Մեզանից գրեթե հազար տարի առաջ ապրած մարդը մտածել է այնպիսի կատեգորիաներով, որոնք այսօր երբեմն մեր մտքով էլ չեն անցնում: Մեզ թվում է, թե մենք 20-րդ դարի երկրորդ կեսին ապրող մարդիկս, մարդկային ողջ քաղաքակրթության ժառանգորդներս, ամեն ինչի մասին ավելի շատ ու ավելի լավ գիտենք, քան մեր նախորդները: Իհարկե, գիտատեխնիկական հեղափոխության տեսանկյունից մենք անհամեմատ

բարձր ենք նրանցից: Բայց երբ խոսքը մարդկային մտքի, իր սեփական աշխարհը թափանցելու մարդու ունակության մասին է, ապա այս դեպքում զարգացման վերաբերյալ չի կարելի դատել որպես զուտ առաջընթաց շարժման: Իմ խոսքերի լավագույն հաստատումը հենց Նարեկացու պոեզիան է, նրա "Մատյանը", որտեղ կա ինչպես իր ժամանակի, այնպես էլ բոլոր ժամանակների բանաստեղծական մտքի թռիչքը:

ՉԻՆԳԻՃ ԱՅԹՄԱՏՈՎ /Ծնվել է 1928/ Կիրգիզ գրող, արձակագիր

"Գարուն" ամսագիր, Երեւան, 1982, թիվ 12, էջ 25/

Վարդան Այգեկցի

21.Մարդը, ընկույզը եւ ձմերուկը

Մի մարդ ընկույզի ծառի տակ ձմերուկ էր ցանել: Եւ պտուղի ժամանակ եկավ տեսաւ մեծամեծ ձմերուկները եւ ծառին նայեց, տեսաւ, որ ընկույզը մանր էր: Մարդն ասաց.

-Տեր Աստված, ինչ որ ստեղծել ես՝ ամենը կարգին է եւ մի բանի նման: Իսկ այս երկու պտուղը անկարգ են, բանի նման չեն:

Մարդն ասում էր, ընկույզի տեղ ձմերուկ պիտի լիներ ծառին եւ ընկույզը ձմերուկի թփի վրա:

Եւ նա պառկեց ծառի տակ եւ նայեց ծառին, եւ հանկարծ մի ընկույզ պոկվեց ծառից եւ ուժգին դիպավ նրա ճակատին եւ ճակատը պատռեց, եւ արյունը եկավ: Եւ մարդը վեր կացավ տեղից եւ աղաղակեց.

-Տեր Աստված, ինչ որ ստեղծել ես, ամենը կարգին է եւ կատարյալ, եւ ով չհավանի քո ստեղծածը, նրա ճակատը իմից վատ լինի, որովհետեւ եթե ընկույզի տեղ ձմերուկ լիներ, ինձ պիտի սպաներ:

22.Աղվեսը եւ թղթատար գայլը

Աղվեսը մի գրած թուղթ գտավ, տարավ գայլին եւ ասաց.

-Այսչափ ժամանակ աշխատեցի եւ բարեխոս մարդիկ մեջ գցեցի եւ իշխանից քեզ համար թուղթ հանեցի, որ ամեն գյուղ՝ ուր հանդիպես, քեզ պիտի տա մի ոչխար:

Եւ այդպես խաբեց գայլին, եւ միասին գնացին մի գյուղ, եւ աղվեսը նստեց բլուրի վրա եւ թուղթը տվեց գայլին: Երբ գայլը գյուղի մեջ մտավ, վրա թափվեցին շները եւ մարդիկ, նրան զգեցին եւ զանախարեցին: Եւ արյունաթաթավ գայլը հազիվ ազատվելով՝ հասավ աղվեսին:

Եւ աղվեսն ասաց:
-Ինչո՞ւ թուղթը ցույց չտվիր:
Եւ գայլն ասաց.
-Տույց տվի, բայց գյուղում հազար շուն կար, որ գիր չգիտեր:

23.Եկեղեցին եւ ջրաղացը

Եկեղեցին պարծեցավ յուր սրբությանը եւ ասաց.

-Ես եմ տաճար Աստծու, եւ դեպի ինձ են գալիս քահանաները եւ ժողովուրդը աղոթք մատուցանելու Աստծուն եւ պատարագ, եւ հաշտվում է Աստված աշխարհի հետ եւ մեղքերին թողություն է լինում:

Այն ժամանակ ջրաղաց ասաց եկեղեցուն.

-Ինչ որ դու ասում ես, արդար է եւ ճշմարիտ, բայց դու իմ երախտիքը մի մոռանա, որ գիշեր-ցերեկ աշխատում եմ եւ դատում այն, ինչ որ ուտում են քահանաները եւ ժողովուրդը եւ ապա քեզ են գալիս աղոթելու եւ երկրպագելու Աստծուն:

24.Աղվեսը եւ որսորդը

Որսորդը շներով տանջում եւ մեղում էր աղվեսին: Եւ աղվեսը դարձավ եւ ասաց:

-Աղաչում եմ քեզ, ասա թե ինչի՞ համար ինձ մեղում: Եւ որսորդն ասաց.
-Որպեսզի հանեմ քո մորթին:
Աղվեսը կանգնեց եւ ասաց.
-Տեր Աստված, փառք քեզ, որ ուզածն այս է: Իսկ ես կարծում էի, թե ինձ ուզում են նշանակել մեր գավառի հավաքած կամ թռչնոցի վանահայր:

25.Այրի կինը եւ խորթ որդին

Մի այրի կին ուներ մի կով, եւ նրա խորթ որդին ուներ մի էշ: Եւ խորթ որդին գողանում էր, կովի կերը տալիս էշին: Եւ այրի կինն Աստուծուն աղաչեց, որ Աստված էշին մեռցնի: Բայց կովը մեռավ, եւ այրին լաց եղավ եւ ասաց. -Ո՛վ Աստված, մի՞թե չկարեցար էշը կովից տարբերել:

ՐԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՃՆԵՐ

- Էշը քառասուն անգամ երուսաղեմ է գնացել, էլի էշ է մնացել:
- Էշն ի՞նչ գիտե, նուշն ի՞նչ է:
- Էս շանն էս շարականն էլ շատ է:
- Էս քեզ խրատ, էլ չցանես կտավիատ:
- Ընկել է փողատերը, կանգնել է տղատերը:
- Ընկերովի մահր հարսանիք է:
- Թացն էլ չորի հետ վառվում է:
- Թե փող չունես ծոցիդ, ականջ չեն դնի ծվոցիդ:
- Թռչուն կա միսն է ուտում, թռչուն կա միսն են ուտում:
- Թռչունը թետվ է թռչուն, մարդու համբավը՝ գործով:

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՌԱՃՆԵՐ

- Մինչեւ Իրաքից ճար կբերեն, օձի կծածը կմահանա:
- Մինչեւ խելոքը կանուրջը կգտներ, հիմարն գետը անցավ:
- Մրջյունի տանը ցողից էլ կարող է ջրիեղել լինել:
- Մրջյունն էլ իր տան մեջ խան ու սուլթան է:
- Յուղը կատուն է կերել, իմ բերանից են հոտ քաշում:
- Նա որ հագար կույր աղջիկ ունենա, հագարին էլ մի օրում մարդի կտա:
- Նա հին դարմանն է քանոն տալիս:
- Նետած քարը ուր էլ թռչի, կաղի ոտքին կդիպչի:
- Նետը մարմինն է խոցում, լեզուն՝ սիրտը:
- Նոր կծի ջուրը սառը կլինի:

Ժամանց

1- Ուրախ անկյուն

ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆՔ

- Վարդանիկ:
- Հաջան,- ոտքի է կանգնում Վարդանիկը:
- Դասդ սովորե՞լ ես:
- Չէ, ցավդ տանիմ: ***

ՀԸԲԸ ՉՏԵՍԱԿ

- Վարդանիկը գրպանները խնձոր լցրած, հեւասպառ մտնում է տուն:
- Որտեղի՞ց բերիր,- հարցնում է մայրը:
- Օճեսի բաղից:
- Տեսա՞վ:
- Հըբը չտեսավ, ետեւիցս կվագե... ***

ՄԵՂԱՎՈՐԸ ՃԱՆՃՆ ԵՐ

- Մի օր Վարդանիկի հայրը պատվավոր հյուր է ընդունում եւ անախորժությունից խուսափելու համար, կանչում է տղային, ասում.
- Եթե հյուրերի մոտ քեզ լավ պահես, անշնորհքություն չանես, երեք ռուբլի կտամ: Վարդանիկը համաձայնվում է հոր հետ, վերցնում երեք ռուբլին եւ նստում ճաշասեղանի մոտ: Հյուրասիրության ընթացքում, որտեղից-որտեղ մի աներես ճանճ պզգալով գալիս, նստում է Վարդանիկի ճաշի ափսեին: Չեռքով մի կողմ է քշում: Այսպես մի քանի անգամ: Երբ կրկին ճանճը պտույտ է գործում ու նստում ափսեի ծայրին, Վարդանիկի համբերությունը հատում է: Նա գրպանից հանում է հոր տված երեք ռուբլիանոցը, շարտում նրա կողմը.
- Առ քու իրեք մանեթ, ես ես ճանճի ճիճիլները բոլի հանեմ: ***

ԱՐԺԵ ԼԱՑ ԷՂՆԵԼ

- Վարդանիկը մտնում է տուն, տեսնում է հայրը լաց է լինում:
- Պա՛, ընչի գույա՞ս:
- Մորդ պալտոն բալկոնից ցած ընկավ:
- Ըղուր հըմար արժե՞ լալ, հըմի կերթան կբերեն:
- Օո, ինչը՞դ չըլան, մերդ էլ մեջն էր: ***

ԲԵՐ ՎԱՌԵՆՔ

- Վա՛յ, վա՛յ, սիրտս սովածությունից մարավ,- ասաց Վարդանիկի մամը:
- Շուտ էրա սպիչկեն բեր վառենք,- փոքր քրոջը դիմեց Վարդանիկը:

2- Արդյոք գիտե՞ք

Մսի պարզ խաշուն համով կը լինի, եթե եփելու ժամանակ նրա մեջ գցեք մի կտոր չոր պանիր:

Մսով սուպին աղ են անում վերջնաեփից 30 րոպե առաջ, ձկան եփելուց սկզբին: ***

Որպեսզի մսով սուպը արագ պատրաստվի, հարկավոր է միայն կտրտել թելերի երկարությամբ (մեծ լապշայի տեսքով) կամ նրանից պատրաստել մասնագնդիկներ (կոլոլիներ):

3.ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

- 1-Քարի պես է՝ Քար չի, Արեւ տեսավ՝ կհալչի:
- 2-Չի այրվում հրում, Չի սուզվում ջրում:
- 3- Այ լա՛վ կամուրջ, Լա՛վ կամուրջ, Անձեռակե՛րտ, լա՛յն կամուրջ՝ Մի գիշերում կառուցվեց՝ Անփայտ, անմեխ ու անմուրճ:
- 4-Այն ին՞չ բան է կայծկլտուն, Ոչ սնդուկ է, Ոչ էլ՝ տուն, Արեւ ուզում է բանալ Առավոտից իրիկուն:
- 5-Կրկնում է քեզ՝ խելք չունի, Հետո գալիս՝ հետք չունի, Դու գնում ես շնչասպառ, Իսկ նա նույնիսկ հեւք չունի: ***

Առողջապահական

ԺՐՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԴԵՂԱՏՈՄՍԵՐ

Աշորայի այլուրը խառնել մեղրին թաց կավի խտությամբ: Այնուհետեւ բլիթածեւ կտրել այդ խառնուրդը, դնել չիբանի վրա, մոմլաթե թղթով ծածկել ու կապել: ***

Վերցնել աշորայի հացը, լավ աղալ եւ ապա երկար տրորելուց հետո դնել չիբանի վրա եւ վիրակապել: ***

Երիտասարդության կենսահյուսք պատրաստելու համար վերցնել 400 գրամ սխտոր, մաքրել, լվանալ, քերիչի վրա քերել, վրան ավելացնել 24 լիմոնից քանված հյութ, խառնել ու լցնել անոթի մեջ, եւ անոթի բերանը մառյայով կապել: Այնուհետեւ, գործածելուց առաջ, անոթը թափահարել եւ ընդունել թեյի գդալով՝ մեկ բաժակ եռացրած ջրում տարրալուծելուց հետո: Մի քանի շաբաթ անց կվերանա քնկոտությունը, կլավանա ընդհանուր զգացողությունը, կբարձրանա աշխատունակությունը: ***

Նյութափոխանակությունը լավացնելու եւ «օրգանիզմը մաքրելու» համար խորհուրդ է տրվում օգտագործել դաշտային ձիածեւի եփուկը: Կտրտած ու չորացրած ֆղաշտային ձիածեւը թեյի սնան թրմել եւ քառորդ բաժակի չափով, օրը 3 անգամ խմել: ***

Երկարատեւ ու անընդմեջ գլուրոցները վերացնելու համար առաջարկվում է օգտագործել սամիթի սերմի եփուկ: Այս բուժամիջոցը նպաստում է նաեւ դիեցմանը՝ կրծքով կերակրելուն: